Էջ 2

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ/1
N 11/23-2020

ք. Երևան «16» 01 2019 20 թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Արպանիվ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խանդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հացցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում **29 801 336 (քսանինը միլիոն ութ հարյուր մեկ հազար երեք հարյուր երեսունվեց)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի ***8.13 կետում նշված համաձայնագրին կից*** վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>5</u> աշխատանքային օրվա

ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

**8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:**

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **ՀՀ ԱԱԾ** | **«Արպանիվ» ՍՊԸ** |
| **ք. Երևան, Նալբանդյան 104** | **ք. Երևան, Նար Դոսի 122** |
| **ՀՀ Ֆին. Նախ. աշխատակազմի գործառնական վարչություն** | **«Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ** |
| **Հ/h 900011301067** | **Հ/h 217002119584001** |
| **ՀՎՀՀ 01507079** | **ՀՎՀՀ 09209297** |
| **Տնօրենի տեղակալ** | **Տնօրեն** |
| **Ա. Հակոբյան** | **Ա. Խանդանյան** |

Հավելված N 1
«16» 01 2020թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ/1 ծածկագրով պայմանագրի
11/23-2020

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| նախատեսված չափաբաժնի | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը** | արտադրողի անվանումը և ծագման երկիրը** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը*** |
| **1** | 31442160/503 | մարտկոց՝ ԿՄ 6US - 60 | ՊրԱօ Իստագենտր Ուկրաինա | Մարտկոց՝ ԿՄ 6US – 60. Անվանական ունակությունը՝ **60Ա/ժ**, Բևեռականությունը՝ ***Հակադարձ*** կամ **0**, երկարությունը՝ ոչ ավել **242մմ**, լայնությունը՝ ոչ ավել **175մմ**, բարձրությունը՝ ոչ ավել **190մմ**, սառը պարպման հոսանքը (EN)՝ ոչ պակաս **450Ա**: Չօգտագործված: | հատ | 16800 | 2 822 400 | 168 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 168 | **Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատասխան ֆինանսա կան միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա** |
| **2** | 31442180/503 | մարտկոց՝ ԿՄ 6US-75 | ՊրԱօ Իստագենտր Ուկրաինա | Մարտկոց՝ ԿՄ 6US – 75. Անվանական ունակությունը՝ **75Ա/ժ**, բևեռականությունը՝ ***հակադարձ*** կամ **0**, երկարությունը՝ ոչ ավել **276մմ**, լայնությունը՝ ոչ ավել **175մմ**, բարձրությունը՝ ոչ ավել **190մմ**, սառը պարպման հոսանքը (EN)՝ ոչ պակաս **640Ա**: Չօգտագործված: | | 23338 | 793 492 | 34 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 34 | **Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատասխան ֆինանսա կան միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **3** | 31442200/503 | մարտկոց՝ ԿՄ 6US-90 | ՊրԱօ Իստա ցենտր Ռւկրաի նա | Մարտկոց՝ ԿՄ 6US – 90. Անվանական ունակությունը **90Ա/Ժ**, բևեռականությունը՝ **հակադարձ** կամ **0**, երկարությունը՝ ոչ ավել **350մմ**, լայնությունը՝ ոչ ավել **175մմ**, բարձրությունը՝ ոչ ավել **190մմ**, սառը պարպման հոսանքը (EN)՝ ոչ պակաս **720Ա**: Չօգտագործված: | հատ | 29100 | 873 000 | 30 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 30 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |
| **4** | 31442230/503 | մարտկոց՝ ԿՄ 6US-190 | ՊրԱօ Իստա ցենտր Ռւկրաի նա | Մարտկոց՝ ԿՄ 6US – 190. Անվանական ունակությունը՝ **190Ա/Ժ**, բևեռականությունը՝ **հակադարձ** կամ **0**, երկարությունը՝ ոչ ավել **515մմ**, լայնությունը՝ ոչ ավել **240մմ**, բարձրությունը՝ ոչ ավել **242մմ**, սառը պարպման հոսանքը (EN)՝ ոչ պակաս **950Ա**: Չօգտագործված: | հատ | 62638 | 1 252 760 | 20 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 20 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |
| **5** | 34351200/522 | ավտոմեքենաների անիվներ | Կոր Դիանտ ՌԴ | Անվադող մարդատար ավտոմեքենայի համար, ձմեռային,175/70R13 անխուց: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի սահմանեյի արագության ինդեքսը(Speed Index)՝ ոչ պակաս **Q(160)** , բեռնվածության ինդեքսը(Load Index)՝ ոչ պակաս **82** , բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս **475**, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ 2019թ.: Չօգտագործված: | հատ | 11550 | 462 000 | 40 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 40 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |
| **6** | 34351200/521 | ավտոմեքենաների անիվներ | Տունգա ՌԴ | Անվադող մարդատար ավտոմեքենայի համար, ամառային, 185/65R14, անխուց: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի սահմանեյի արագության | հատ | 15638 | 312 760 | 20 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 20 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ինդեքսը(Speed Index)՝ ոչ պակաս T(190) , բեռնվածության ինդեքսը(Load Index)՝ ոչ պակաս 90 , բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս 600, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ, քան 2019թ.: Չօգտագործված: | | | | | | | նագրի հիման վրա |
| **7** | 34351200/523 | ավտոմեքենաների անիվներ | ԱՇԿ ՌԴ | Անվադող՝ մարդատար ավտոմեքենայի համար, համասեզոն, 205/70R16, անխուց: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի սահմանելի արագության ինդեքսը (Speed Index)՝ ոչ պակաս **Q(160)** , բեռնվածության ինդեքսը (Load Index)՝ ոչ պակաս **97** , բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս **730**, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ 2019 թ.: Չօգտագործված: | հատ | 26638 | 2 663 800 | 100 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 100 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |
| **8** | 34351200/526 | ավտոմեքենաների անիվներ | Գրենլա նդեր Չինաս տան | Անվադող՝ մարդատար ավտոմեքենայի համար, ամառային, 205/70R15, անխուց: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի սահմանելի արագության ինդեքսը (Speed Index)՝ ոչ պակաս **T(190)** , բեռնվածության ինդեքսը (Load Index)՝ ոչ պակաս **96** , բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս **710**, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ 2019 թ.: Չօգտագործված: | հատ | 17400 | 348 000 | 20 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 20 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |
| **9** | 34351200/524 | ավտոմեքենաների անիվներ | ՌՕԱԴԻ ՔՍ Չինաս տան | Անվադող՝ մարդատար ավտոմեքենայի համար, ձմեռային, 205/60R15, անխուց: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի սահմանելի արագության ինդեքսը (Speed Index)՝ ոչ պակաս **T(190)** , բեռնվածության ինդեքսը (Load | հատ | 20638 | 1 238 280 | 60 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 60 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Index)՝ ոչ պակաս **91** , բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս **615**, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ 2019 թ.: Չօգտագործված: | | | | | | |
| **10** | 34351200/528 | ավտոմեքենաների անիվներ | ՊՕՎԵՐ ՏՐԱԿ Չինաստան | Անվադող մարդատար ավտոմեքենայի համար, ամառային, 205/60R15, անխուց: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի սահմանելի արագության ինդեքսը(Speed Index)՝ ոչ պակաս H(210) , բեռնվածության ինդեքսը(Load Index)՝ ոչ պակաս 91 , բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս 615, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ, քան 2019թ.: Չօգտագործված: | հատ | 18500 | 1 480 000 | 80 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 80 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատասխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |
| **11** | 34351200/529 | ավտոմեքենաների անիվներ | ՀԱՒԴԱ Չինաստան | Անվադող՝ մարդատար ավտոմեքենայի համար, ձմեռային, 265/65R17, անխուց: Անվադողի վրա պետք է նշված լինի արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի սահմանելի արագության ինդեքսը(Speed Index)՝ ոչ պակաս S(180) , բեռնվածության ինդեքսը(Load Index)՝ ոչ պակաս 112 , բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս 1120, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ, քան 2019թ.: Չօգտագործված: | հատ | 36638 | 146 552 | 4 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 4 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատասխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |
| **12** | 34351200/530 | ավտոմեքենաների անիվներ | Գրենլանդեր Չինաստան | Անվադող՝ մարդատար ավտոմեքենայի համար, ամառային, 265/65R17, անխուց: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի սահմանելի արագության ինդեքսը (Speed Index)՝ ոչ պակաս **H(210)** , բեռնվածության ինդեքսը (Load Index)՝ ոչ պակաս **112** , | հատ | 34100 | 136 400 | 4 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 4 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատասխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս **1120**, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ 2019թ.: Չօգտագործված: | | | | | | |
| **13** | 34351200/531 | ավտոմեքենաների անիվներ | ԱՇԿ ՌԴ | Անվադող՝ թեթև բեռնատար ավտոմեքենայի համար, համասեզոն, 225/75R16C, անխուց: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի սահմանելի արագության ինդեքսը(Speed Index)՝ ոչ պակաս N(140) , բեռնվածության ինդեքսը(Load Index)՝ ոչ պակաս 121/120 , բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս 1450/1400, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ, քան 2019թ.: Չօգտագործված: | հատ | 27798 | 1 111 920 | 40 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 40 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |
| **14** | 34351200/532 | ավտոմեքենաների անիվներ | ՎԱՆԼԻ Չինաս տան | Անվադող՝ մարդատար ավտոմեքենայի համար, ձմեռային, 265/60R18, անխուց: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի սահմանելի արագության ինդեքսը (Speed Index)՝ ոչ պակաս **S(180)** , բեռնվածության ինդեքսը (Load Index)՝ ոչ պակաս **114** , բեռնվածությունը (կգ)Max Load (kg)՝ ոչ պակաս **1180**, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ, քան 2019թ.: Չօգտագործված: | հատ | 39638 | 317 104 | 8 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 8 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |
| **15** | 34351200/527 | ավտոմեքենաների անիվներ | ՊՕՎԵՐ ՏՐԱԿ Չինաս տան | Անվադող՝ մարդատար ավտոմեքենայի համար, ձմեռային, 215/60R16, անխուց: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի սահմանելի արագության ինդեքսը-Speed Index-ոչ պակաս H(210) , բեռնվածության ինդեքսը(Load Index)՝ ոչ պակաս | հատ | 22800 | 1 368 000 | 60 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 60 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 99 , բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս 775, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ, քան 2019թ.: Չօգտագործված: | | | | | | |
| **16** | 34351200/525 | ավտոմեքենաների անիվներ | ՎԱՆԼԻ Չինաստան | Անվադողը մարդատար ավտոմեքենայի համար, ամառային, 215/60R16, անխուց: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի սահմանելի արագության ինդեքսը(Speed Index)՝ ոչ պակաս V(240) , բեռնվածության ինդեքսը(Load Index)՝ ոչ պակաս 95 , բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս 690, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ, քան 2019թ.: Չօգտագործված: | հատ | 20800 | 416 000 | 20 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 20 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատասխան ֆինանսա կան միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա |
| **17** | 34351200/533 | ավտոմեքենաների անիվներ | ՊՕՎԵՐ ՏՐԱԿ Չինաստան | Անվադող մարդատար ավտոմեքենայի համար, ձմեռային, 235/70 R16, անխուց: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի սահմանելի արագության ինդեքսը(Speed Index)՝ ոչ պակաս T(190) , բեռնվածության ինդեքսը(Load Index)՝ ոչ պակաս 106 , բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս 950, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ, քան 2019թ.: Չօգտագործված: | հատ | 29400 | 1 764 000 | 60 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 60 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատասխան ֆինանսա կան միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **18** | 34351500/501 | ավտոբուսների անիվներ | Կոր Դիանտ ՌԴ | Անվադող բեռնատար ավտոմեքենայի համար, 275/70 R22.5, կառուցվածքը՝ all steel(ամբողջական մետաղական կառուցվածք), պահպանաշերտի գծանկարը-ունիվերսալ: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի սահմանելի արագության ինդեքսը (Speed Index)՝ ոչ պակաս **J(100) / E(70)**, բեռնվածության ինդեքսը(Load Index)՝ ոչ պակաս **148/145, 152/148,** բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս **3150/2900, 3550/3150**, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ, քան 2019թ. Չօգտագործված: | հատ | 119000 | 714 000 | 6 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 6 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |
| **19** | 34351400/513 | բեռնատարների անիվներ | ՕՄՍԿՇ ԻՆԱ ՌԴ | Անվադող բեռնատար ավտոմեքենայի համար, 10.00 R 20 , կառուցվածքը՝ ռադիալ, պահպանաշերտի գծանկարը-ունիվերսալ: Լրակազմը ներառում է անվադողը, անվախուցը՝ նախատեսված ըստ անվադողի չափի և ժապավենը: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի շերտայնությունը(PR)՝ ոչ պակաս **18**, սահմանելի արագության ինդեքսը(Speed Index)՝ ոչ պակաս **J(100)**, բեռնվածության ինդեքսը(Load Index)՝ ոչ պակաս **149/146**, բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս **3250/3000**, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ, քան 2019թ. : Չօգտագործված: | հատ | 78638 | 1 572 760 | 20 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 20 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **20** | 34351400/514 | բեռնատարների անիվներ | ՕՄՍԿՇ ԻՆԱ ՌԴ | Անվադող՝ բեռնատար ավտոմեքենայի համար, 12.00-18, կառուցվածքը՝ դիագոնալ, պահպանաշերտի գծանկարը՝ բարձր անցողականության: Լրակազմը ներառում է անվադողը, անվախուցը՝ նախատեսված ըստ անվադողի չափի և ժապավենը: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի շերտայնությունը(PR)՝ ոչ պակաս 8, սահմանելի արագության ինդեքսը(Speed Index)՝ ոչ պակաս J(100), բեռնվածության ինդեքսը(Load Index)՝ ոչ պակաս 129, բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս 1850, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ, քան 2019թ.: Չօգտագործված: | հատ | 119638 | 7 656 832 | 64 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 64 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |
| **21** | 34351600/501 | գյուղատնտեսական մեքենաների անիվներ | ՎՈԼ ՏԱՅՐ ՌԴ | Անվադող հատուկ տեխնիկայի համար, 12.5/80-18, կառուցվածքը՝ դիագոնալ, պահպանաշերտի գծանկարը՝ բարձր անցողականության: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի շերտայնությունը(PR)՝ ոչ պակաս 12, սահմանելի արագության ինդեքսը(Speed Index)՝ ոչ պակաս A8(40), բեռնվածության ինդեքսը(Load Index)՝ ոչ պակաս 138/125, բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս 2360/1650, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ, քան 2019թ.: Չօգտագործված: | հատ | 93638 | 187 276 | 2 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 2 | Մատակա րարման ժամկետը կսահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 22 | 34351600/502 | գյուղատնտեսական մեքենաների անիվներ | ՎՈԼ ՏԱՅՐ ՌԴ | Անվադողը հատուկ տեխնիկայի համար, 16.9-24 կառուցվածքը-դիագոնալ, պահպանաշերտի գծանկարը՝ բարձր անցողականության: Անվադողի վրա պետք է նշված լինի արտադրող երկիրը և արտադրողը: Անվադողի վրա նշված լինի անվադողի շերտայնությունը-PR-ոչ պակաս 12, սահմանելի արագության ինդեքսը-Speed Index-ոչ պակաս A8(40), բեռնվածության ինդեքսը-Load Index-ոչ պակաս 149, բեռնվածությունը (կգ)(Max Load (kg))՝ ոչ պակաս 3250, անվադողի արտադրության տարեթիվը-ոչ շուտ, քան 2019թ.: Չօգտագործված: | հատ | 20000<br>0 | 400 000 | 2 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 2 | Մատակա րարման ժամկետը կաահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |
| 23 | 34351200/534 | ավտոմեքենաների անիվներ | ՄԱՔ ՍԻՍ Տայվան | Անվադող քառագնացի համար, 26/8.00 R12 NHS 47K, անխուց: Կառուցվածքը՝ ռադիալ, պահպանաշերտի գծանկարը՝ բարձր անցողականության: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի շերտայնությունը(PR)՝ ոչ պակաս 4), առավելագույն ճնշումը(Max pressure)՝ ոչ պակաս 70ԿՊա, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ, քան 2019թ.: Չօգտագործված: | հատ | 75000 | 900 000 | 12 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 12 | Մատակա րարման ժամկետը կաահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **24** | 34351200/535 | ավտոմեքենաների անիվներ | | Անվադողը քառագնացի համար, 26/10.00 R12 NHS 53K Կառուցվածքը՝ ռադիալ, պահպանաշերտի գծանկարը՝ բարձր անցողականության: Անվադողի վրա պետք է նշված լինեն արտադրող երկիրը, արտադրողը, անվադողի շերտայնությունը(PR)՝ ոչ պակաս 4), առավելագույն ճնշումը(Max pressure)՝ ոչ պակաս 70ԿՊա, անվադողի արտադրության տարեթիվը՝ ոչ շուտ, քան 2019թ.: | հատ | 72000 | 864 000 | 12 | ք. Երևան, Նալբանդյան 104 | 12 | Մատակա րարման ժամկետը կաահմանվիհամապատա սխան ֆինանսա կան միջոցներ նախատես վելու դեպքում՝ կողմերի միջև կնքված համաձայ նագրի հիման վրա |

**Ծանոթություն՝**

1. Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ, ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից:
2. Ապրանքը ընդունում է պահեստապետը:
3. Տեխնիկական բնութագրերով բոլոր հղումների դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն հասկանալ կամ համարժեքը:

**Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

***Եթե հրավերով չի նախատեսվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա «անվանումը և ապրանքային նշանը» սյունակից հանվում է «և ապրանքային նշանը», իսկ «արտադրողի անվանումը և ծագման երկիրը» սյունակից՝ «արտադրողի անվանումը և» բառերը:*

****Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| **ՀՀ ԱԱԾ** | **«Արպանիվ» ՍՊԸ** |
| **ք. Երևան, Նալբանդյան 104** | **ք. Երևան, Նար Դոսի 122** |
| **ՀՀ Ֆին. Նախ. աշխատակազմի գործառնական վարչություն** | **«Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ** |
| **Հ/հ 900011301067** | **Հ/հ 217002119584001** |
| **ՀՎՀՀ 01507079** | **ՀՎՀՀ 09209297** |
| **Տնօրենի տեղակալ՝** | **Տնօրեն՝** |
| **Ա. Հակոբյան** | **Ա. Խանդանյան** |

Հավելված N 2
« 16 » 01 2020թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ/1 ծածկագրով պայմանագրի
11/23-2020թ.

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 31442160/503 | մարտկոց՝ ԿՄ 6US - 60 | ***Վճարման ժամանակացույցը կլրացվի և կկնքվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*** | | | | | | | | | | | | |
| 2 | 31442180/503 | մարտկոց՝ ԿՄ 6US-75 | | | | | | | | | | | | | |
| 3 | 31442200/503 | մարտկոց՝ ԿՄ 6US-90 | | | | | | | | | | | | | |
| 4 | 31442230/503 | մարտկոց՝ ԿՄ 6US-190 | | | | | | | | | | | | | |
| 5 | 34351200/522 | ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | |
| 6 | 34351200/521 | ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | |
| 7 | 34351200/523 | ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | |
| 8 | 34351200/526 | ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | |
| 9 | 34351200/524 | ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | |
| 10 | 34351200/528 | ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | |
| 11 | 34351200/529 | ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | |
| 12 | 34351200/530 | ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | |
| 13 | 34351200/531 | ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | |
| 14 | 34351200/532 | ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | |
| 15 | 34351200/527 | ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | |
| 16 | 34351200/525 | ավտոմեքենաների անիվներ | | | | | | | | | | | | | |

| | | | |
|---|---|---|---|
| **17** | 34351200/533 | ավտոմեքենաների անիվներ | |
| **18** | 34351500/501 | ավտոբուսների անիվներ | |
| **19** | 34351400/513 | բեռնատարների անիվներ | |
| **20** | 34351400/514 | բեռնատարների անիվներ | |
| **21** | 34351600/501 | գյուղատնտեսական մեքենաների անիվներ | |
| **22** | 34351600/502 | գյուղատնտեսական մեքենաների անիվներ | |
| **23** | 34351200/534 | ավտոմեքենաների անիվներ | |
| **24** | 34351200/535 | ավտոմեքենաների անիվներ | |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

** *իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափը:*

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ ԱԱԾ**
**ք. Երևան, Նալբանդյան 104**
**ՀՀ Ֆին. Նախ. աշխատակազմի**
**գործառնական վարչություն**
**Հ/հ 900011301067**
**ՀՎՀՀ 01507079**

**Տնօրենի տեղակալ**

**Ա. Հակոբյան**

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Արպանիվ» ՍՊԸ**
**ք. Երևան, Նար Դոսի 122**
**«Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ**
**Հ/հ 217002119584001**
**ՀՎՀՀ 09209297**

**Տնօրեն՝**

**Ա. Խանդանյան**

Հավելված N 3
«      »      20   թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________

______________________

գտնվելու վայրը ___________

հh ______________

հվհh ______________

Պատվիրատու

______________________

______________________

գտնվելու վայրը ___________

հh______________

հվհh______________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «          » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20   թ.

Պայմանագրի համարը՝ _________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «          » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________

ստորագրություն

______________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________

ստորագրություն

______________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »          20    թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ    N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ____________________
Գնորդի անվանումը                                        Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20     թ. ____________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                              պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20  թ. ______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն